47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում

պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դասախոսակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնա-դաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.
5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.
6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մանկավարժական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝
1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.
2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.
3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝
1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հաշիվների կազմմանը.
3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

65.Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

66. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

67. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

68. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

69. Մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաբաժինը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

70. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները,

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

71. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

72. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ու Մ

09 դեկտեմբերի 2022թվականի N 234

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1. «Հրազդան քաղաքի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԲԱՂԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ԲԱԲԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՐՅԱՆ ՍԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թ-ի դեկտեմբերի 9-ի
N 234 որոշման

Կազմվել է ----------- 2022 թ.

Բաղկացած է ---- թերթից

Տպագրված է բնօրինակը ---- օրինակ

Օրինակ

«Հաստատված է»

ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2022 թվականի դեկտեմբերի 9-ի

N 234 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

---------- Ա. Միքայելյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ

ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

12 սեպտեմբեր 2007թ.

Գրանցման համար N 33.210.01848

ՀՎՀՀ՝ 03008189

12.09.2007թ. գրանցված կանոնադրության թիվ

---------փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

գործակալության կողմից«---------» ---------20---թ.

աշխատակից՝ ---------------------

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՀՐԱԶԴԱՆ 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» (այսուհետ՝ դպրոց) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ դպրոց):

Դպրոցի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.2 Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, առանձին բանկային հաշիվ, ՀՀ զինանշանով,իր անվան-մամբ հայերեն մակագրությամբ կնիք, որը, կարող է ունենալ անհատականացնող այլ միջոցներ:

1.3 «Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Հրազդան քաղաքի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի (գրանցման համարը՝ 33.0094 , ՀՎՀՀ 03008189) վերակազմավորման արդյունքում ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակեր-պության (գրանցման համարը՝ 33.210.01848 ՀՎՀՀ 03008189) իրավահաջորդը:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ , ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ:

Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույ-քային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Դպրոցի գտնվելու վայրն է՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, ք. Հրազդան Արամ Խաչատրյանի 9:

1.4. Կազմակերպության լրիվ անվանումն է՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Republic of Armenia, Kotayq region, «Hrazdan community, Music school after Aram Khachatryan » community non comerical organization

Республика Армения , Котайкский регион, « Разданская общинная музыкальная школа имени Арама Хачатуряна» Общинная некоммерческая организация

II. ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) երաժշտական մասնագիտական կրթության իրականացում,

բ) արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և տարածում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,

2.2. Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատ – չելիության, ազգային և համամարդկային արժեքների գերակայության, անձի ազատ զարգացման, ինքնավարության,կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

III. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

3.1 Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում՝ հաշվի առնելով նրանց հոգևոր, գեղագիտական,ֆիզիկական ընդունակությունները և կարողությունները:

3.2 Նպաստավոր պայմաններ ստեղծել և ապահովել սովորողների մասնակցությունը հանրապետական և միջազգային մրցույթներին և փառատոններին:

3.3 Մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու համար ստեղծել նպաստավոր պայմաններ:

IV. ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն իր գործունեության ուղղություններին համապատասխան իրականացնում է կրթադաս-տիարակչական ծրագրեր, համաձայն իր կանոնադրության:

4.1. Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլաններին, ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

4.2 Դպրոցի յուրաքանչյուր սովորող իրավունք ունի ընդգրկվելու դպրոցի ցանկացած բաժնում սովորելու համար:

V. ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐԳԸ

5.1. Դաշնամուրային և լարային բաժիններ ընդունվում են 6-9 տարեկան երեխաներ, փողային և ազգային նվագարաններ բաժիններ՝ 6-12 տարեկան երեխաներ:

5.2 Երգեցողության և ձայնի մշակման բաժնում ընդունվում են 6-12 տարեկան երեխաները:

5.3. Դպրոցի դաշնամուրային և լարային բաժնի ուսման տևողությունը 7 տարի է: Ընդունվում են 6-9 տարեկան երեխաները:

5.4 Երգեցողության, փողային և ազգային նվագարանների բաժիններում ուսման տևողությունը 6-9 տարեկան երեխաների համար 7 տարի է, իսկ 9-12 տարեկան երեխաների համար՝ 5 տարի:

5.5 Առանձին դեպքերում ընդունող հանձնաժողովը իրավասու է կատարելու անհրաժեշտ ընդունելու –

թյան՝ առանց տարիքային սահմանափակման։

5.6 Դպրոցի բարձր դասարաններ (սկսած 2-րդ դասարանից) ընդունվող աշակերտները ընդունելության քննությունները են հանձնում մասնագիտական առարկաներից՝ տվյալ դասարանի համար նախատեսված ուսումնական ծրագրերի համապատասխան։

5.7 Դպրոցի աշակերտության համար ուսումնական տարին սկսվում է ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ին և ավարտվում է հաջորդ տարվա մայիսի 31-ին։

5.8 Դպրոցի 1-ին դասարանի կոմպլեկտավորումը կատարվում է հունիսից օգոստոս ամիսների ընթացքում։

5.9 Դպրոցի աշակերտների ուսման վարձը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ։

5.10 Ծնողական միջոցների գանձումը սահմանվում է 9 ամիսների համար և գանձվում է յուրաքանչյուր ամսվա համար։

VI ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Դպրոցի կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով.

6.2 Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդը։ Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկման առաջարկություններ է ներկայացնում

ա/ դպրոցի կանոնադրության վերաբերյալ,

բ/ դպրոցի գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի,առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ,

գ/ ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ ելնելով դպրոցի հիմնական խնդիրներից նպատակներից կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից,

դ/ լրացուցիչ կրթական ծրագրերի, առաջավոր փորձի տարածման վերաբերյալ,

ե/ մանկավարժների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ։

Դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժ աշխատողները։ Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ։Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ։ Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է դպրոցի տնօրենը։

6.3 Դպրոցի հիմնադիրն ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

6.4 Դպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են

ա/դպրոցի հիմնադրումը,

բ/ դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ/ դպրոցի օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

դ/դպրոցի վերակազմակերպումը և լուծարումը

ե/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

6.5 Համայնքը իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, սահմանվում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.6 Համայնքը:

ա/դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ/վերահսկողություն է իրականացնում դպրոցի գործունեության նկատմամբ.

գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում, դպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները.

դ/լսում է դպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե/ վերահսկողություն է իրականացնում դպրոցին սեփականության իրավունքով ամրացված գույքի օգտագործման նկատմամբ.

զ/վերահսկողություն է իրականացնում դպրոցի սեփականության պահպանության նկատմամբ,իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է/հաստատում է դպրոցի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը

ը/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

թ/ հաստատում է դպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը:

6.7 Դպրոցի տնօրենն իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազո – րությունների սահմաններում, ղեկավարում է դպրոցի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.8 Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս դպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ/ նախագահում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերը.

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և կառավարության որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում` ֆինանսական միջոցները.

դ/ տալիս է դպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

ե/ աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է ուսուցիչներին, աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ, նշանակում կարգապահական տույժեր:

զ/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

է/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև

ը/սահմանում է դպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

թ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ/ իրականացնում է մանկավարժական կադրերի միջև ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների ,աշխատանքի պաշտ-պանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է դպրոցի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը:

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և դպրոցի կառա-վարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

6.9 Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի կարգադրությամբ, տնօրենի լիազորություն-ները իրականացնում է այլ անձ:

6.10 Դպրոցի տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը

ա/ պատասխանատու է դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսում-նական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար:

բ/ վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը:

գ/դպրոցում կազմակերպում մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

զ)ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբավարների աշխատանքի դրական փորձը.

Դասատուներին խորհրդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճում-ների.

է)ապահովում է դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.

ը)կազմակերպում է սաների հանգիստը և ժամանցը միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ.

6.11 Դպրոցի տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է դպրոցի շենքի և գույքի պահպանման ուսումնական գործընթացի նյութատեխ-նիկական ապահովման, դպրոցի սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, դպրոցի ուսումնական պարապմունքներին դասասենյակի ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպա-նության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ)միջոցներ է ձեռնարկում դպրոցի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար.

6.12 Խմբավարը՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբի սաների շրջանում սերտորեն համագործակ-ցելով մյուս խմբավարների հետ.

բ) ապահովում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.

գ) իրականացնում է խմբի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայաց-նում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

դ) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստ-ող միջոցառումներ, մրցույթներ, արշավներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.

ե) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության կյանքի համար վտանգ պարունակել կամ խոչընդոտել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը.

VII ԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Դպրոցի սեփականությունը ձևավորվում է դպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմ-նադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև դպրոցի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից.

7.2 Դպրոցը իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատաս-խան իր հայեցողությամբ՝ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավուն-քով իրեն պատկանող գույքը.

7.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով դպրոցին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունք-

նեք՝ բացառությամբ դպրոցի լուծարումից հետո մնացած գույքի:

7.4 Դպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է դպրոցը:

7.5 Դպրոցի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

7.6 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից դպրոցին ամրացված գույքը:

7.7 Դպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ դպրոցի կանոնադրությամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները դպրոցի սեփականությունն են բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքի բյուջե:

Դպրոցին ամրացված գույքի՝ օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

7.8 Դպրոցը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

7.9 Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

7.10 Դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ/ բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները:

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և դպրոցի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

7.11 Դպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ներկայացվել աուդիտի (վերստուգման) համայնքի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

7.12 Դպրոցը շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութա-տեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

7.13 Դպրոցը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

«պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

VIII. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

8.1 Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն սովորողներն են, նրանց ծնողները(օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

8.2 Երեխաներին խմբակներում ընդգրկելու ժամանակ դպրոցի տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել դպրոցի կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են դպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով:

8.3. Սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու այլ պարտականությունները սահմանվում են դպրոցի կանոնադրությամբ և իրավական ակտերով:

8.4 Դպրոցի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է կանոնադրությամբ:

8.5 Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության ունեն անհրաժեշտ մասնագիտական մանկավարժական որակավորում:

8.6 Դպրոցի մանկավարժն իրավունք ունի, մասնակցելու դպրոցի կառավարմանը, համատեղությամբ կատարել գիտական ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

8.7 Դպրոցի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, դպրոցի կանոնադրությամբ աշխատանքային պայմանագրով:

8.8 Դպրոցի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

8.9 Սովորողը պարտավոր է՝

ա) բարեխղճորեն սովորել,

բ) խնամքով վերաբերվել դպրոցի գույքին,

գ) հարգել դպրոցի սովորողների և աշխատողների իրավունքներն արժանապատվությունը,

դ) պահպանել դպրոցի ներքին կարգապահական կանոնները:

8.10 Դպրոցում սովորողն իրավունք ունի հոգևոր և ֆիզիկական անձեռնմխելիության:

8.11 Դպրոցի սովորողների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, դպրոցի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

IX. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1 Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշ—

մասի, 22 քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հիմունքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

9.2 Դպրոցի լուծարման դեպքում՝ դպրոցի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը ուղղվում է համայնքի բյուջե:

9.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2022թվականի N 235

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով,

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1.«Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐԴԻԺԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԲԱՂԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՊԱՅԱՐՅԱՆ ԱՆԻ

ԲԱԲԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՐՅԱՆ ՍԵՐՈՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 դեկտեմբեր 2022թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թ-ի դեկտեմբերի 9 -ի
N 235 որոշման

Կազմվել է ------------------ 2022թ.
Բաղկացած է ----- թերթից
Տպագրված է ընդամենը ---- օրինակ
Օրինակ

« Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9 -ի
N 235 որոշմամբ
Համայնքի ղեկավար՝
---------------------- Ա. Միքայելյան /

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ
ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 17.09.2007թ.
Գրանցման համար N 33.210.01849
ՀՎՀՀ՝ 03008207
17.09.2007թ. գրանցված կանոնադրության թիվ
---------փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Գործակալության կողմից«---------» ---------20---թ.
աշխատակից՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՀՐԱԶԴԱՆ 2022

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, արտադպրոցական կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու կարգադրություններով և սույն կանոնադրությամբ:

3. Հաստատությունը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի, Միկրոշրջան 33 հասցեում :

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուներով:

6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Հաստատության անվանումն է.

Հայերեն լրիվ՝ «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հայերեն կրճատ՝ «Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ «Разданская музыкальная школа имени Арно Бабаджаняна» общинная некоммерческая организация

Ռուսերեն կրճատ՝ «Музыкальная школа имени Арно Бабаджаняна» ОНО

Անգլերեն լրիվ՝ "Music School named after Arno Babajanyan of Razdan " community non-profit organization

Անգլերեն կրճատ՝ "Music School named after Arno Babajanyan" CNPO

Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Այժմյան «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցը» հանդիսանում է Հրազդան քաղաքի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի (գրանցման համարը 33.210.01849, ՀՎՀՀ 03008207)

իրավահաջորդը:

8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

10. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան և նպատակները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց երաժշտական ունակությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր–մշակութային, գեղագիտական դաստիարակությունը: Հաստատությունն ստեղծվում է մշակութային և նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու համար:

12. Հաստատությունն ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը:

13. Հաստատության գործունեության հիմնական նպատակներն են՝

- ❖ երաժշտական նախնական մասնագիտական կրթության իրականացում,
- ❖ արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,
- ❖ ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, օժտված և տաղանդավոր երեխաների համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,
- ❖ նպաստավոր պայմանների ստեղծումը և աջակցությունը սովորողների հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոններին մասնակցելու:
- ❖ մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում:

14. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ

բնույթի սկզբունքների վրա:

15. Հաստատության հիմնական խնդիրներն են.

- մինչև 18 տարեկան սովորողների երաժշտական ունակությունների զարգացումը, հոգևոր- մշակութային դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները , հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.
- մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:
- դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների և հմտությունների զարգացումը.
- համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

16. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում.
- համերգների կազմակերպում և կրթական գործունեության այլ տեսակներ:

Հաստատությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն հիման վրա:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

17. Հաստատությունն իր գործունեության ուղղությանը համապատասխան երաժշտական դպրոց է, որն իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իր կանոնադրության:

18. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցի համապատասխան:

19. Հաստատությունն իր գործունեության ուղղությանը համապատասխան երաժշտական դպրոց է, որն իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իր կանոնադրության:

20. Հաստատությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով
սաների հետաքրքրությունների ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

21. Սաների ընդգրկվում են հաստատության նույն կամ տարբեր տարիքային միավորումներում (խմբակ, ստուդիա, ակումբ, համույթ և այլն): Յուրաքանչյուր սան իրավունք ունի ընդունվել իր նախընտրած երաժշտական բաժինը:

22. Բոլոր բաժիններում պարապմունքները պետք է լինեն շաբաթական 2-3 անգամ:

23. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից մինչև մայիսի 31-ը: Հաստատությունում սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

24. Դպրոցի 1-ին դասարանի կոմպլեկտավորումը կատարվում է հունիս կամ օգոստոս ամիսների ընթացքում:

25. Դպրոցի աշակերտների ուսման վարձը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ:

26. Ծնողական միջոցների գանձումը սահմանվում է 9 ամիսների համար և գանձվում է եռամսյակը մեկ կամ յուրաքանչյուր ամսվա համար:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

27. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, նրա լիազորած պետական մարմինը , գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը,որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով ։

28. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդը, որի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողների, կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողների երկուական ներկայացուցիչներ։ Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ։

Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում

- հաստատության կանոնադրության վերաբերյալ
- հաստատության գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ
- ուսումնական ծրագրերի և պլանների՝ ելնելով հաստատության հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից
- լրացուցիչ կրթական ծրագրերի և առաջավոր փորձի տարածման վերաբերյալ
- մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ։ Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ։

Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է հաստատության տնօրենը։

29. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեության ու կառավարման վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

30. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- հաստատության հիմնադրումը,
- հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

- հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

31. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

32. Համայնքի ղեկավարը՝

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,
- կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,
- լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
- վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
- համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
- հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- կազմում է հաստատության հաստիքացուցակը ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում ավագանու հաստատմանը,
- իրականացնում է օրենքով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

33. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

Տնօրենը, պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունը ու կրում պատասխանատվություն

օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տնօրենը՝

- առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,
- առաջարկության տեսքով համայնքի ղեկավարին է ներկայացնում հաստատության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
- նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
- տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
- բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,
- կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալի (ների) և աշխատակիցների միջև,
- օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
- ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
- գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը պատճառած վնասի համար,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կառավարման մյուս մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

34. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է տեղակալը կամ հաստատության աշխատակիցներից մեկը:

35. Տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

❖ պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար,

❖ վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը,

❖ հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ,

❖ ընդհանրացնում և տարածում է լավագույն մանկավարժների դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,

❖ ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:

❖ կազմակերպվում է սաների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաների օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

36. Հաստատության տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

❖ Պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական , հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքների՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

❖ միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

37. Մանկավարժը՝

❖ Պատասխանատու է սանի մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման, առաջընթացի համար:

❖ Կազմակերպում է դասարանական համերգներ, ուսումնական մասով փոխանցելին է ներկայացնում համերգային և մրցութային երեխաների տվյալները.

❖ Մասնակցում է միջոցառումներին սաների ներգրավման աշխատանքներին

❖ Անհրաժեշտության դեպքում դպրոցի անունից հանդես է գալիս սանի հետ

տարբեր մշակութային հարթակներում (երաժշտական մրցույթներ, միջոցառումներ, փառատոներ):

- դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի/խմբակի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժների հետ.
- ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և բնության մանկավարժական պահանջների միասնությունը,
- հաստատության տնօրինությանն է ներկայացնում սովորողների համախմբումների և վարքի մասին տեղեկություններ,
- արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

38. Բաժնի ղեկավարը (բաժնի վարիչ)՝

- դաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբակավարների հետ.
- ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և բնության մանկավարժական պահանջների միասնությունը.
- իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների համախմբումների և վարքի մասին տեղեկություններ.
- կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.
- արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

39. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները, որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

40. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու հաստատության ներքին կարգապահական կանոններով:

41. Սաների ծնողների /օրինական ներկայացուցիչների/ իրավունքներն ու

պարտականությունները կարգավորվում են համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով, հաստատության կանոնադրությամբ, ծնողի հետ կնքած երկկողմանի պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

42. Հաստատության անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ

43. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ըստ մասնագիտության ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում: Իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր մասնագետի, որի կրթությունը միջին մասնագիտական է:

44. Հաստատության մանկավարժի իրավունք ունի սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

45. Հաստատության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ, ներքին կանոնակարգով և աշխատանքային պայմանագրով:

46. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

47. Հաստատությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

48. Սանը պարտավոր է՝

- ❖ բարեխղճորեն սովորել,
- ❖ խնամքով վերաբերվել հաստատության գույքին
- ❖ հարգել հաստատության սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

49. Հաստատության երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

50. Հաստատությունն իր գործունեության ուղղությանը համապատասխան կրթական դպրոց է, որն իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իր կանոնադրության

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

51. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

52. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը՝ առանց օտարման իրավունքի:

53. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

54. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

55. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

56. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Հաստատությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, բացառությամբ հիմնադրի և օրենքով սահմանված դեպքերի: Երաժշտական դպրոցի դահլիճի օգտագործման տրամադրման կարգը, վարձավճարի չափը և այլ պայմանները սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են, բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարներից, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքային բյուջե: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

57. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

58. Հաստատությունը ֆինանսավորվում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

59. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները
- բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

60. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

61. Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող /ոչ առևտրային/ կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

62. Հաստատությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել Հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

63. Հաստատության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

64. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2022թվականի N 236

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1. «Հրազդան քաղաքի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐԴԻԺԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԲԱՂԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ՔԱՐԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 դեկտեմբեր 2022թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թ-ի դեկտեմբերի 9 -ի
N 236 որոշման

Կազմվել է «------» ---------- 2022թ.

Բաղկացած է ------ թերթից

Տպագրված է ընդամենը ------- օրինակ

Օրինակ

« Հաստատված է»

ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2022 թվականի դեկտեմբերի 9 -ի

N 236 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

---------------- Ա. Միքայելյան /

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ

ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 12.09.2007թ.

Գրանցման համար N 33.210.01874

ՀՎՀՀ՝ 03008146

12.09.2007թ. գրանցված կանոնադրության թիվ

--------փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Գործակալության կողմից«---------» ---------20—թ.

աշխատակից՝ ---------------------------

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2022թ.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հրազդանի Էրվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն հանդիսացող դպրոց:

2. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, առանձին բանկային հաշիվ, ՀՀ զինանշանով, իր անվամբ հայերեն և ռուսերեն մակագրությամբ կլոր կնիք, դրոշմ:

3.«Հրազդանի Էրվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Հրազդան քաղաքի «Էրվանդ Քոչարի անվան գեղարվեստի դպրոցի» (գրանցման համարը՝ 330098, ՀՎՀՀ 03008146) վերակազմավորման արդյունքում ստեղծված ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Էրվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության(գրանցման համարը 33.210.01847, ՀՎՀՀ 03008146) իրավահաջորդը: Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ: Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Դպրոցի գտնվելու վայրն է՝ ք.Հրազդան, Միկոյան, շենք106:

II ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Դպրոցի նպատակն է երեխաներին տալ համակողմանի հայեցի, էսթետիկ ու գեղագիտական դաստիարակություն:

5. Դպրոցի մեջ ներառվում է երաժշտական, կերպարվեստի, պարարվեստի, թատերական արվեստի ուղղություններ:

6. Համապատասխան անհրաժեշտության դեպքում, ապագայում պահանջներին համապատասխան՝ բացել ժող. ստեղ-ծագործության այլ բաժիններ:

7. Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության և մարդասիրության, հանդուրժողականության, ազգային և համամարդկային արժեքների գերակայության, անձի ազատ զարգացման ինքնադրսևորման և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

8. Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում, հաշվի առնելով նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական ընդունակությունները և կարողությունները:
9. Նպաստավոր պայմաններ ստեղծել և աջակցել սովորողների մասնակցությանը հանրապետական և միջազգային ցուցահանդեսների, մրցույթների, փառատոների և կոնկուրսների:
10. Մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու համար ստեղծել նպաստավոր պայմաններ:

III ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն իր գործունեության ուղղությունների համապատասխան իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իր կանոնադրության:

11. Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված ուսումնական պլանների, ծրագրերի և ժամանակացույցի համապատասխան:
12. Դպրոցի յուրաքանչյուր սան իրավունք ունի ընտրելու դպրոցի ցանկացած բաժնում սովորելու համար:

ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐԳԸ

13. Կերպարվեստի բաժնում սովորողների կոմպլեկտավորումը կատարվում է I դասարան՝ 6-12 աշակերտ, II դասարան՝ 6-12 աշակերտ, III դասարան՝ 6-12 աշակերտ, IV դասարան՝ 6-12 աշակերտ:
14. Կերպարվեստի բաժնում մեկ դասը համարժեք է 24 դասաժամի:
15. Կերպարվեստի բաժնում ընդունվում են 10-12 տարեկան երեխաներ:
16. Դպրոցի դաշնամուրային և լարային բաժնում ուսման տևողությունը 7 տարի է: Ընդունվում են 7-9 տարեկան երեխաները:
17. Ժողովրդական գործիքների բաժնում ուսման տևողությունը 5 տարի է: Ընդունվում են 7-12 տարեկան երեխաներ:
18. Պարարվեստի բաժնում ուսման տևողությունը 5 տարի է 9-12 տարեկան երեխաների համար, 7 տարի՝ 6-9 տարեկան երեխաների համար: Դասարանում երեխաների քանակը 8-12 աշակերտ է, ցանկալի է զույգերով:
19. Երգեցողության և ձայնի մշակման բաժնում ընդունվում են 7-12 տարեկան երեխաներ:
20. Թատերական բաժնում ընդունվում են 7-12 տարեկան երեխաներ:
21. Առանձին դեպքերում ընդունող հանձնաժողովը իրավասու է կատարելու անհրաժեշտ ընդունելություն՝ առանց տարիքային սահմանափակման:
22. Դպրոցի բարձր դասարանները (սկսած II դաս-ից) ընդունվող աշակերտները ընդունելության քննություններ են հանձնում մասնագիտական առարկաներից տվյալ դասարանի համար նախատեսված ուսումնա-

կան ծրագրերի համապատասխան:

23. Դպրոցի պարապմունքները սկսվում է սեպտեմբերի 1-ից մինչև մայիսի 31-ը:

24. Դպրոցի 1 դասարանի կոմպլեկտավորումը կատարվում է հունիս կամ օգոստոս ամիսների ընթացքում:

25. Դպրոցի աշակերտների ուսման վարձը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ:

26. Ուսողական միջոցների գանձումը սահմանվում է 9 ամիսների համար և գանձվում է հատուցմամբ մեկ կամ յուրաքանչյուր ամսվա համար:

IV ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

27. Դպրոցի կառավարումն իրականացվում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը՝ համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով:

28. Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ, որն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում.

ա/ դպրոցի կանոնադրության վերաբերյալ,

բ/ դպրոցի գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ,

գ/ ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով դպրոցի հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից,

դ/ լրացուցիչ կրթական ծրագրերի, առաջավոր փորձի տարածման վերաբերյալ,

ե/ մանկավարժների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ,

զ/ ավարտական դասարանների աշակերտները ավարտական քննությունների ու ստուգարքները դրական հանձնելու դեպքում ստանում են ավարտական վկայականներ.

Դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժները: Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

Մանկավարժական խորհուրդը նիստ հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ:

Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է դպրոցի տնօրենը:

29. Դպրոցի հիմնադիրն ունի դպրոցի գործունեության և կառավարման վերաբերյալ ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

30. Դպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ դպրոցի հիմնադրումը.

բ/ դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում` նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ/ դպրոցի օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

դ/ դպրոցի վերակազմակերպումը և լուծարումը.

ե/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը.

31. Համայնքը իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

32. Համայնքը`

ա/ դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ/ վերահսկողություն է իրականացնում դպրոցի գործունեության նկատմամբ.

գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում դպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի` Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները.

դ/ լսում է դպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե/ վերահսկողություն է իրականացնում դպրոցին սեփականության իրավունքով ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ/ վերահսկողություն է իրականացնում դպրոցի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով հիմնադրի որոշմամբ կամ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է/ հաստատում է դպրոցի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

թ/ հաստատում է դպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը.

33. Դպրոցի տնօրենն իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է դպրոցի գործունեությունը ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրա-

փակման ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջնե-րը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

34. Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս դպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ/ նախագահում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերը,

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և նախարարության որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ/ տալիս է դպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե/ աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է ուսուցիչներին, աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

զ/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

ը/ սահմանում է դպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

թ/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ/ իրականացնում է մանկավարժական կադրերի միջև ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

ժա/ վերահսկողություն է իրականացնում դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

ժբ/ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

ժգ/ կազմում է դպրոցի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը,

ժդ/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և դպրոցի կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

35. Դպրոցի տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

ա/ պատասխանատու է դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար.

բ/ վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

գ/ դպրոցում կազմակերպում մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

դ/ ընդհանրացնում և տարածում է լավագույն դասատուների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

ե/ ապահովում է դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.

զ/ կազմակերպում է սաների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

37. Դպրոցի տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա/ պատասխանատու է դպրոցի շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, դպրոցի սանհիգիենիկ ու բարեկարգ վիճակի, դպրոցի ուսումնական պարապմունքների՝ պարագաների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ/ միջոցներ է ձեռնարկում դպրոցի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար.

38. Դաստիարակը՝

ա/ դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս դասատուների հետ.

բ/ ապահովում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.

գ/ իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

դ/ կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդման ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, արշավներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.

ե/ արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խոչընդոտել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացմանը:

V. ԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

39. Դպրոցի սեփականությունը ձևավորվում է դպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև դպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

40. Դպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

41. Հիմնադիրը սեփականության իրավունքով դպրոցին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ դպրոցի լուծարումից հետո մնացած գույքի:

42. Դպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է դպրոցը:

43. Դպրոցի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

44. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից դպրոցին ամրացված գույքը:

45. Դպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ դպրոցի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները դպրոցի սեփականությունն են՝ բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից ստացված վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքի բյուջե:

Դպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում ստեղծված անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

46. Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

47. Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

48. Դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ/ բարեգործական, նպատակային նվիրատվությունները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և դպրոցի կանոնադրական խնդիրների չհակասող գործունեությունից ստացված միջոցները.

49. Դպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի(վերստուգման)` համայնքի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

50. Դպրոցը շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, ուսումնանյութական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

51. Դպրոցը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով` <<Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

VI. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

52. Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն սաներն են, նրանց ծնողները/օրինական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:

53. Երեխաներին խմբակներում ընդունելու ժամանակ դպրոցի տնօրինությունը պարտավոր է ծնողներին /օրինական ներկայացուցիչներին/ ծանոթացնել դպրոցի կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են դպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով:

54. Սաների ծնողների /օրինական ներկայացուցիչների / իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են դպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

55. Դպրոցի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ:

56. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր , ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական մանկավարժական որակավորում:

57. Դպրոցի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու դպրոցի կառավարմանը, համատեղությամբ կատարել գիտական, ստեղծագործական և մանկավարժական փորձի աշխատանքներ:

58. Դպրոցի մանկավարժական և այլ աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, դպրոցի կանոնադրությամբ աշխատանքային պայմանագրով։

59. Դպրոցի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը։

60. Դպրոցում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը։

61. Սանը պարտավոր է.

ա/ բարեխղճորեն սովորել,

բ/ խնամքով վերաբերվել դպրոցի գույքին,

գ/հարգել դպրոցի սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը,

դ/պահպանել դպրոցի ներքին կարգապահական կանոնները.

62. Դպրոցի ծնողների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, դպրոցի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով։

VII. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

63. Դպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն

64. Դպրոցի լուծարման դեպքում դպրոցի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է համայնքի բյուջե։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբեր 2022թվականի N 237

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>

1. «Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Հրազդանի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հրազդանի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԲԱՂԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ԲԱԲԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

09 դեկտեմբեր 2022թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2022 թ-ի դեկտեմբերի 9-ի
N 237 որոշման

Կազմվել է ------------------- 2022թ.

Բաղկացած է   թերթից

Տպագրված է ընդամենը ---- օրինակ

Օրինակ

« Հաստատված է»

ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2022 թվականի դեկտեմբերի 9-ի

N 237 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

----------- Ա. Մկրտչյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ

ՀՐԱԶԴԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 24.09.2007թ

Գրանցման համար N 33.210.01851

ՀՎՀՀ՝ 03008162

24.09.2007թ. գրանցված կանոնադրության մեջ

--------փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

Գործակալության կողմից«---------» ---------20---թ.

աշխատակից՝ ------------------------------

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2022

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հրազդանի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է Հրազդան քաղաքի Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոցի(գրանցման համարը՝ 33.0095 ՀՎՀՀ 03008162), Հրազդան քաղաքի Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համարը՝ 33.210.01851 ՀՎՀՀ 03008162) իրավահաջորդը:

1.2 Կազմակերպության հիմնադիրը Կոտայքի մարզի Հրազդան համայնքն է:

1.3 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով <<Կրթության մասին >> ՀՀ օրենքով այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Համայնքի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.5 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվամբ կնիք, դրոշմակնիք , լոգո և ձևաթղթեր:

1.6 Կազմակերպությունն ունի շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ, ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.7 Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ << Հրազդանի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

Ռուսերեն լրիվ՝ „Разданская школа искусств имени К. Заряна„ общинная некоммерческая организация,

Անգլերեն լրիվ՝ "Art school named after K.Zaryan of Hrazdan" community non-profit organization:

1.8 Դպրոցի գտնվելու վայրն է՝ Հրազդան համայնք, Քաղաք Հրազդան, Կենտրոն Ա-6:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Դպրոցի գործունեության նպատակը արվեստի բնագավառում արտադպրոցական, գեղագիտական, կրթամշակութային ուսումնական կրթության իրականացումն է.

ա) երաժշտական մանկավարժական կրթության իրականացում,

բ) արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում,
օժտված և տաղանդավոր երեխաների հայտնաբերման միջին և բարձրագույն
ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի
վճարովի ուսուցում,

ե) բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի
դասընթացների, մշակույթի և արվեստների ուսուցողական ծրագրերի իրականացում

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համերգային գործունեություն

բ) թատերական ներկայացումներ

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել առևտրային ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա

2.3 Ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերն են.

ա) անհատական և խմբակային պարապմունքներ /դաս/: Անհատական դասի տևողությունը 45րոպե, խմբակայինը՝ 40րոպե:
բ)աշակերտի ինքնուրույն /տնային/ աշխատանք,
գ)աշակերտների քննական և համերգային ելույթներ, թատերական ներկայացումներ՝ երաժշտական, պարարվեստի և թատերական բաժիններում:
դ)աշակերտի ուսումնական և ինքնուրույն աշխատանքների ցուցահանդես կերպարվեստի բաժնում:
2.4 Աշակերտների առաջադիմությունը գնահատվում է 10 միավոր համակարգով:
2.5 Ավարտական քննությունները հանձնելու դեպքում շրջանավարտը ստանում է վկայական:
2.6 Ավարտական քննությունները անհարգելի պատճառով չհանձնած կամ անբավարար գնահատական ստացած աշակերտը ստանում է համապատասխան տեղեկանք:
2.7 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
ա) համերգային գործունեություն
բ) թատերական ներկայացումներ:
Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:
2.8 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:
2.9 Համայնքային կազմակերպությունը համայնքի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. <u>*ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ*</u>

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են համայնքը, որպես լիազորված համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:
Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:
3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեության և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) Կազմակերպության հիմնադրումը,
բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,
զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:
3.3 Համայնքի ղեկավարը՝ իրականացնում է
Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
Հրազդան համայնքի ղեկավարը

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը.
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները.
դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.
ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման պահպանության նկատմամբ.
զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը.
թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի համայնքային մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր որը ստորագրում է համայնքի ղեկավարը:
գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:
զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել, համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.
բ) ՀՀ օրենսդրությամբ, Հրազդան համայնքի ղեկավարի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:
գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության

աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև.

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին հաշվապահական հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմնին.

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.6 Կազմակերպության տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը.

ա) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, դաստիարակման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար.

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առողջության և փարքի նկատմամբ կանոնակարգում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

գ) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

դ) ընդհանրացնում և տարածում է լավագույն ուսուցիչների փորձը, մանկավարժներին խորհրդատվություն է տրամադրում գիտության, մշակույթի և մանկավարժության նորագույն նվաճումներին.

ե) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը

3.7 Կազմակերպության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը

ա) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, բարեկարգ վիճակի, աշխատանքի անվտանգության /հիգիենա/, հաստատության ուսումնական պարապմունքներին դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և տարածքը մաքրող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան համալրելու և ամրապնդելու համար :

3.8 Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում համայնքի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Համայնքը կարող է Կազմակերպությանն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Համայնքը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն

օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի դպրոցի տարածքը կամ գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հրազդանի համայնքի ղեկավարի որոշմամբ: Անշարժ տարածքի կամ գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ համայնքի կողմից սահմանված դեպքերի:

4.7 Համայնքի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ համայնքի ղեկավարի կամ երրորդ անձանց իրավունքները դադարելու կամ փոփոխելու համար:

4.8 Համայնքի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում աշակերտների ծնողների վարձից գոյացած գումարները, ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենքով չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները և նվիրատվությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության աջակցող դրամաշնորհները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքը:

4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում ստացված շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հրազդանի համայնքը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել համայնքի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հիմնավորմամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Հրազդանի համայնքի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 դեկտեմբերի 2022թվականի N 238

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների 2023 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը համաձայն N N 1, 2, 3, 4, 5 ,6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 ,21, 22 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ին:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -3

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՏՈՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ԲԱՂԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ԲԱԲԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՍԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԱՍՊԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 դեկտեմբեր 2022թ.
ք.Հրազդան

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9-ի
N 236 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 2 մանկապարտեզ	Տնօրեն	1	120 000	120 000
2		[illegible]	0.25	115 000	28 750
3		Գլխավոր հաշվապահ	0.5	110 000	55 000
4		Բուժքույր	0.5	110 000	55 000
5		Դաստիարակ	1.12	105 000	117 600
6		Դաստիարակի օգնական	1	105 000	105 000
7		Երաժշտական դաստիարակ	0.25	105 000	26 250
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.25	105 000	26 250
9		Տնտեսվար	0.5	105 000	52 500
10		Խոհարար	1	110 000	110 000
11		Խոհարարի օգնական	0.5	105 000	52 500
12		Հավաքարար	0.5	105 000	52 500
13		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		8.37		908 350

[illegible] 2022 թվականի ... որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<[illegible] թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 4 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	5.6	105 000	588 000
6		Դաստիարակի օգնական	5	105 000	525 000
7		Երաժշտական դաստիարակ	1.25	105 000	131 250
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.75	105 000	78 750
9		Տնտեսվար	1	105 000	105 000
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		Պահակ	1	105 000	105 000
14		Դռնապան	1	105 000	105 000
15		Հավաքարար	0.75	105 000	78 750
	Ընդամենը		23.35		2 506 750

Հավելված 3

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 5 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	4,48	105 000	470 400
6		Դաստիարակի օգնական	4	105 000	420 000
7		Երաժշտական դաստիարակ	1	105 000	105 000
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,5	105 000	52 500
9		Պահեստապետ	1	105 000	105 000
10		Տնտեսվար	0,5	105 000	52 500
11		Լվացարար	0,75	105 000	78 750
12		Խոհարար	1	110 000	110 000
13		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
14		Հավաքարար	0,5	105 000	52 500
15		Դռնապան	1	105 000	105 000
16		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		20,73		2 231 650

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 6 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		[illegible]	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	5,6	105 000	588 000
6		Դաստիարակի օգնական	5	105 000	525 000
7		Երաժշտական դաստիարակ	1,25	105 000	131 250
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,75	105 000	78 750
9		[illegible]	1	105 000	105 000
10		[illegible]	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		[illegible]	0,75	105 000	78 750
14		[illegible]	1	105 000	105 000
15		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		23,35		2 506 750

Հավելված 5
Հրազդան համայնքի ավագանու
թվականի դեկտեմբերի 9-ի
N 238 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
<<Հրազդանի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Ստորաբաժանումների անվանումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 7 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	4,48	105 000	470 400
6		Դաստիարակի օգնական	4	105 000	420 000
7		Երաժշտական դաստիարակ	1	105 000	105 000
8		Ֆիզդաստիարակության հրահանգիչ	0.5	105 000	52 500
9		Տնտեսվար	0.5	105 000	52 500
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	0,5	105 000	52 500
13		Հավաքարար	1,5	105 000	157 500
14		Պահակ	1	105 000	105 000
15		Բանվոր	1	105 000	105 000
	Ընդամենը		20,48		2 205 400

Հավելված 6
Հրազդան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 9-ի
N 238 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կառուցվածքային ստորաբաժանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 8 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	6,72	105 000	705 600
6		Դաստիարակի օգնական	6	105 000	630 000
7		Երաժշտական դաստիարակ	1,5	105 000	157 500
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	105 000	105 000
9		Գործավար	1	105 000	105 000
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		Դռնապան	1	105 000	105 000
14		Հավաքարար	1	105 000	105 000
15		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		26,22		2 808 100

Հավելված 7
Երևանի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի
N 238 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Երևանի թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Ստորաբաժանման անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 9 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	4.48	105 000	470 400
6		Դաստիարակի օգնական	4	105 000	420 000
7		Երաժշտական ղեկավար	1	105 000	105 000
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.75	105 000	78 750
9		Պահեստապետ	1	105 000	105 000
10		Հոգեբան	0.75	105 000	78 750
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	0.5	105 000	52 500
13		Լվացարար	1	105 000	105 000
14		Հավաքարար	0.5	105 000	52 500
15		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		19.98		2 152 900

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 11 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	7,84	105 000	823 200
6		Դաստիարակի օգնական	7	105 000	735 000
7		Երաժշտական դաստիարակ	1,75	105 000	183 750
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	105 000	105 000
9		[illegible]	1	105 000	105 000
10		[illegible]	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		[illegible]	1	105 000	105 000
14		Հավաքարար	0.5	105 000	52 500
15		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		28,09		3 004 450

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 12 մանկապարտեզ	Տնօրեն	1	150 000	150 000
2		[illegible]	1,25	125 000	156 250
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	12,32	105 000	1 293 600
6		Դաստիարակի օգնական	11	105 000	1 155 000
7		Երաժշտական ղեկավար	2,75	105 000	288 750
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1,5	105 000	157 500
9		Գործավար	1	105 000	105 000
10		Տնտեսվար	1	105 000	105 000
11		Պահեստապետ	1	105 000	105 000
12		Օ/Ժ բանվոր	1	110 000	110 000
13		Խոհարար	2	110 000	220 000
14		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
15		Հավաքարար	2	105 000	210 000
16		Պահակ	1	105 000	105 000
17		Դռնապան	1	105 000	105 000
	Ընդամենը		42,82		4 591 100

Հավելված 10
[illegible] ավագանու
[illegible] թվականի [illegible]-ի
N 238 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 13 մանկապարտեզ	Տնօրեն	1	140 000	140 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	125 000	125 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	10,08	105 000	1 058 400
6		Դաստիարակի օգնական	9	105 000	945 000
7		Երաժշտական դաստիարակ	2,25	105 000	236 250
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	105 000	105 000
9		Գործավար	1	105 000	105 000
10		Տնտեսվար	1	105 000	105 000
11		Պահեստապետ	1	105 000	105 000
12		Խոհարար	2	110 000	220 000
13		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
14		Լվացարար	1	105 000	105 000
15		Հավաքարար	1	105 000	105 000
16		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		35,33		3 784 650

Հավելված 11
[illegible]

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 15 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	6,72	105 000	705 600
6		Դաստիարակի օգնական	6	105 000	630 000
7		Երաժշտական դաստիարակ	1,5	105 000	157 500
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	105 000	105 000
9		Տնտեսվար	1	105 000	105 000
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		Լվացարար	1	105 000	105 000
14		Հավաքարար	0,75	105 000	78 750
15		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		25,97		2 781 850

Հավելված 12

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի թիվ 16 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 16 մանկապարտեզ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	7,84	105 000	823 200
6		Դաստիարակի օգնական	7	105 000	735 000
7		Երաժշտական դաստիարակ	1,75	105 000	183 750
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	105 000	105 000
9		[illegible]	1	105 000	105 000
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Տնտեսվար	1	105 000	105 000
12		Խոհարար	2	110 000	220 000
13		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
14		[illegible]	1	105 000	105 000
15		Հավաքարար	1	105 000	105 000
16		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		30.59		3 271 950

Հավելված 13
[illegible]
[illegible] 9-ի
N [illegible] որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդան համայնքի Քաղսիի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Քաղսիի մանկապարտեզ ՀՈԱԿ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	4,48	105 000	470 400
6		Դաստիարակի օգնական	4	105 000	420 000
7		Երաժշտական դաստիարակ	0,75	105 000	78 750
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0,75	105 000	78 750
9		Հոգեբան	0,5	105 000	52 500
10		[illegible]	1	105 000	105 000
11		Խոհարար	1	110 000	110 000
12		Խոհարարի օգնական	1	105 000	105 000
13		[illegible]	1	105 000	105 000
14		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		19,48		2 100 400

[illegible] 14

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդան համայնքի Սոլակի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Սոլակի մանկապարտեզ ՀՈԱԿ	[illegible]	1	120 000	120 000
2		[illegible]	0,75	115 000	86 250
3		[illegible]	1	110 000	110 000
4		[illegible]	1	110 000	110 000
5		[illegible]	3,36	105 000	352 800
6		[illegible]	3	105 000	315 000
7		[illegible]	0,75	105 000	78 750
8		[illegible]	0,5	105 000	52 500
9		[illegible]	1	105 000	105 000
10		[illegible]	1	110 000	110 000
11		[illegible]	0,5	105 000	52 500
12		[illegible]	0,5	105 000	52 500
13		[illegible]	0,5	105 000	52 500
14		[illegible]	1	105 000	105 000
	Ընդամենը		15,86		1 702 800

Հավելված 15
[illegible]
2022 [illegible] 9-ի
N 22[illegible] որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդան համայնքի Լեռնանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ

Հ/հ	Ստորաբաժանման անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Լեռնանիստի մանկապարտեզ ՀՈԱԿ	Տնօրեն	1	130 000	130 000
2		Մեթոդիստ (ուս. գծով տնօրենի տեղակալ)	1	120 000	120 000
3		Գլխավոր հաշվապահ	1	110 000	110 000
4		Բուժքույր	1	110 000	110 000
5		Դաստիարակ	4.48	105 000	470 400
6		Դաստիարակի օգնական	4	105 000	420 000
7		Երաժշտական դաստիարակ	1	105 000	105 000
8		Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.5	105 000	52 500
9		[illegible]	0.5	105 000	52 500
10		Պահեստապետ	1	105 000	105 000
11		Տնտեսվար	0.5	105 000	52 500
12		Խոհարար	1	110 000	110 000
13		Խոհարարի օգնական	0.5	105 000	52 500
14		Հավաքարար	0.5	105 000	52 500
15		Դռնապան	1	105 000	105 000
16		Պահակ	1	105 000	105 000
	Ընդամենը		19.98		2 152 900

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Թիվ 1 երաժշտական դպրոց	Տնօրեն	1	155 000	155 000
2		Փոխտնօրեն	1	110 000	110 000
3		Գլխավոր հաշվապահ	1	105 000	105 000
4		Դասատու երաժշտ. գրականության	0,56(13,5դ/ժ)	105 000	59 063
5		Դասատու դաշնամուրի	5,58(134դ/ժ)	105 000	586 250
